ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1951 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ[1]

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսել ակադեմիայի Տնտեսագիտության սեկտորում կազմված «Հայկական ՍՍՌ տնտեսական աշխարհագրություն» գիրքը, որը Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության կողմից հաստատված է իբրև դասագիրք՝ միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի համար։

Գիրքը բաղկացած է 10 գլխից։ Առաջին հինգ գլուխներում, որոնք հիմնականում ներածության բնույթ են կրում, համառոտ տեղեկություններ են տրվում Հայկական ՍՍՌ աշխարհագրական դիրքի, սահմանների, տերիտորիայի և վարչա-տերիտորիալ բաժանման մասին (գլ. 1-ին), տրվում է մեր երկրի համառոտ պատմա-աշխարհագրական ակնարկը (գլ. 2-րդ), շարադրվում է Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության ընդհանուր տեսությունը (գլ. 3-րդ), բերվում են որոշ տվյալներ Հայկական ՍՍՌ բնակչության (գլ. 4-րդ) և ֆիզիկա-աշխարհագրական պայմանների ու բնական հարստությունների մասին (գլ. 5-րդ)։

Հաջորդ հինգ գլխուներում (էջեր 45—130) խոսվում է Սովետական Հայաստանի տնտեսության մասին։ Գրքի վեցերորդ գլուխը նվիրված է ռեսպուբլիկայի արդյունաբերության աշխարհագրությանը։ Այս հատվածում բավական հանգամանորեն և համոզիչ փաստերով ցույց է տրված Հայաստանի արդյունաբերության վիթխարի աճը սովետական շրջանում, բնութագրված են ծանր, թեթև և տեղական արդյունաբերության ու արհեստագործական կոոպերացիայի հիմնական ճյուղերն ու նրանց տեղաբաշխումը (էներգետիկա, գունավոր մետաղաձուլություն, քիմիական, մեքենաշինական, մետաղամշակման շինանյութերի, տեքստիլ, կապի, կաշվի, կոշկեղենի, սենդի ու համի, փայտամշակման արդյունաբերություն և այլն)։ Յոթերորդ գլխում խոսվում է Սովետական Հայաստանի գյուղատնտեսության աշխարհագրության մասին։ Այստեղ համառոտ տեղեկություններ են տրվում մեր ռեսպուբլիկայի հողային ֆոնդի մասին, հաջող ընտրված նյութերով ու փաստերով ցույց է տրվում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը ստալինյան հնգամյակների ընթացքում, բնութագրվում են գյուղատնտեսության ճյուղերը և նրանց տեղաբաշխումը։

Այս երկու գլուխները (6-րդ և 7-րդ), որ կազմում են գրքի ծավալի մոտ կեսը (60 էջ՝ 130-ից), նրա ամենից ավելի հաջողված, փաստական նյութերով հագեցված մասերն են։

Գրքի ութերորդ և իններորդ գլուխները կարևոր տեղեկություններ են պարունակում Հայկական ՍՍՌ հաղորդակցության ճանապարհների և տրանսպորտի (երկաթուղային, խճուղային ու ավտոմոբիլային, ջրային, ավիացիոն), ինչպես նաև Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների հետ մեր Ռեսպուբլիկայի ունեցած տնտեսական կապերի մասին։ Վերջին՝ տասներորդ գլուխը նվիրված է Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանին և չնայած իր ոչ մեծ ծավալին (ընդամենը 14 էջ) պարունակում է համարյա այն բոլոր անհրաժեշտ տվյալները, որոնք բնորոշում են Երևանը՝ իբրև մեր ռեսպուբլիկայի արդյունաբերության, գիտության ու կուլտուրայի խոշորագույն կենտրոն։

Գրքի արժանիքներից մեկն էլ այն է, որ ամեն մի գլխի վերջում տրվում են մի շարք հարցեր՝ նյութի կրկնության համար, որոնք նպաստում են այն բանին, որպեսզի աշակերտի ուշադրությունը բևեռվի տվյալ գլխում շարադրված հիմնական, հանգուցային խնդիրների վրա։

Այս է քննարկվող գրքի կառուցվածքը։

Այս գրքի հրատարակությունը, որ վաղուց հասունացած անհրաժեշտություն էր թե՛ մեր

---

[1] *«Հայկական ՍՍՌ տնտեսական աշխարհագրություն», դասագիրք միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի համար։ Կազմեցին Է.Մ. Տեր-Հակոբյան և Ա. Օհանյան։ Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1950 թ.։ 130 էջ, գինը 3ռ. 50 կ։*

միջնակարգ դպրոցների աշակերտության, թե՛ մեր բուհերի ուսանողության և թե մեր ընթերցող հասարակության համար, Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության սեկտորի դրական և հաջողված գործը պետք է համարել։ Գրքի հիմնական արժանիքը այն է, որ կազմողները կարողացել են բավական ընդարձակ և մեծ մասամբ հաջող ընտրված փաստական տվյալներով ցույց տալ Սովետական Հայաստանի տնտեսության ու կուլտուրայի ոչ հեռավոր անցյալը, ներկան ու մոտ ապագան՝ Սովետական Միության ժողովրդական տնտեսության զարգացման ու բուռն վերելքի ընդհանուր ֆոնի վրա։ Նրանց հաջողվել է բազմակողմանիորեն և հիմնականում ճիշտ պատկերել բոլշևիկների պարտիայի և Սովետական կառավարության լենինյան-ստալինյան իմաստուն ազգային քաղաքականության կենսագործման փայլուն արդյունքը հանդիսացող այն տնտեսական ու կուլտուրական բարգավաճումը, որ ապրել և ապրում է հայ ժողովուրդը՝ իր սովետական հայրենիքում, նրա գոյության 30 տարիների ընթացքում։

Կազմողները կարողացել են ընդհանուր առմամբ հաջող կերպով ցույց տալ, թե ինչպես Սովետական իշխանության տարիներին, շնորհիվ բոլշևիկների պարտիայի և ՍՍՌՄ կառավարության հսկայական օգնության, շնորհիվ եղբայրական մյուս ժողովուրդների և հատկապես ռուս մեծ ժողովրդի օգնության, շնորհիվ մեծ Ստալինի ամենօրյա օգնության և հայրական հոգատարության, Հայաստանը,— ցարական Ռուսաստանի այդ նախկին խուլ, հեռավոր, հետամնաց ծայրամասն ու կիսագաղութը, հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակների կողմից ավերված այդ երկիրը, այսօր վերածվել է ինդուստրիալ երկրի, առաջավոր սոցիալիստական կոլխոզային գյուղատնտեսական երկրի, անընդհատ զարգացող ու բարգավաճող կուլտուրայի և գիտության երկրի, որտեղ ապահովված է կոմունիստական հասարակարգը կառուցող բոլոր աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակի անշեղ վերելքը։

Համոզիչ կերպով ցույց է տրված Սովետական Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի, գիտության, ժողովրդական կրթության և առողջապահության զարգացումը վերջին 30 տարիների ընթացքում։

Կազմողները տալիս են բազմաթիվ փաստական տեղեկություններ, լուսանկարներ, դիագրամներ ու սխեմատիկ քարտեզներ, որոնք ակնառու և համոզիչ կերպով ցուցադրում ու ապացուցում են վերևում նշված հաջողությունները։ Ահա թե ինչու քննարկվող գիրքը պետք է համարել հիմնականում հաջողված գործ։

Հայկական ՍՍՌ տնտեսական աշխարհագրության այս դասագիրքը ունի նաև մի շարք թերություններ, որոնք կարող են հեշտությամբ վերացվել գրքի հաջորդ հրատարակության ժամանակ։ Նշենք այդ թերություններից գլխավորները։

Նախ՝ մեր կարծիքով, պետք է վերադասավորել գրքի առաջին 5 գլուխները՝ հետևյալ հերթականությամբ.

ա) Հայկական ՍՍՌ-ի աշխարհագրական դիրքը, սահմանները, տերիտորիան և վարչա-տերիտորիալ բաժանումը.

բ) Հայկական ՍՍՌ-ի ֆիզիկա-աշխարհագրական պայմանները և բնական հարստությունները.

գ) Բնակչությունը.

դ) Համառոտ պատմա-աշխարհագրական ակնարկ.

ե) Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության ընդհանուր տեսությունը։

Այսպիսի վերադասավորում կատարելու դեպքում շարադրանքը կդառնար ավելի տրամաբանական ու հետևողական, քանի որ երկրի աշխարհագրական դիրքի, սահմանների և տերիտորիայի մասին ասվածը կտրված չէր լինի նրա ֆիզիկա-աշխարհագրական պայմանների ու բնական հարստությունների մասին ասվածից, և այս երկու գլուխը 3-րդի հետ միասին («Բնակչությունը») անհրաժեշտ նախապատրաստություն կհանդիսանային հաջորդ գլուխների համար։

Խոսելով Արևելյան Հայաստանի մի մասի Ռուսաստանին միացվելու մասին, և փորձելով տալ այդ միացման գնահատականը, գրքի կազմողները գրում են. «Թեև Թյուրքիայի և Իրանի համեմատությամբ Ռուսաստանի էկոնոմիկան և կուլտուրան շատ ավելի զարգացած էին, այնուամենայնիվ Ռուսաստանը ինքն այն ժամանակ տնտեսապես հետամնաց երկիր էր, ուստի Հայաստանի միացումը Ռուսաստանին չէր կարող Հայաստանի տնտեսությունը նասցնել միշ քն շատ բարձր զարգացման»[1] (էջ 6)։

[1] Ընդգծումը ամենուրեք մերն է։ Ա. Ռ.։

Այս ձևակերպումը մենք համարում ենք ոչ ճիշտ։ Այդ երևում է նաև հենց իրենց՝ կազմողների հետևյալ խոսքերից. «Դարալագյազի, Շիրակի, Սևանա լճի ավազանի և այլ շրջանների ավերված, քայքայված ու մեծ մասամբ այրված գյուղերում արագորեն բնակություն էին հաստատում Իրանից և Թյուրքիայից գաղթած հայերը։ Դարերի ընթացքում լքված դաշտերը, խաղողի ու պտղատու այգիները նորից սկսում են մշակվել ու ոռոգվել, երկրի լեռնային հիանալի արոտներում կրկին սկսում են արածել խոշոր և մանր եղջերավոր ասասունների հոտերը։ Քաղաքներում սկսում են զարգանալ արհեստները ու առևտուրը» (էջ 6)։ Հեղինակները բերում են փաստեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպես այդ միացումից հետո սկսեց որոշ զարգացում ապրել արդյունաբերությունը, հատկապես գինու արդյունաբերությունը, պղնձի արդյունահանումը (էջ 5), յուղի, պանրի արտադրությունը (էջ 7), բամբակագործությունը (էջ 9—10), ղդալի չափով զարգացան տրանսպորտը (էջ 105—106), առևտուրը և այլն։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացումն ու նրա առանձին ճյուղերի արտադրանքի աճը նախապատերազմյան ժամանակաշրջանում՝ շատ թույլ է իլուստրացված թվական տվյալներով ու համեմատություններով՝ նախասովետական շրջանի համապատասխան տվյալների հետ. ցացառություն են կազմում 19-րդ էջի դիագրաման և 18-րդ, 48-րդ և 51-րդ էջերում տրված մի քանի թվերը, որոնք շատ աննշան չափով են լրացնում այդ պակասը։

Մեծ պակաս է մեծադիր տնտեսական քարտեզի բացակայությունը։ Տրված 4 սխեմատիկ տնտեսական քարտեզները,— որոնց թիվը ցանկալի կլիներ շատացնել,— լիովին չեն վերացնում այդ թերությունը։

Անհրաժեշտ է որոշ չափով ընդլայնել ֆիզիկա-աշխարհագրական ակնարկը, որը չափազանց սեղմ է տրված (ընդամենը 3 էջ)։

Հայկական ՍՍՌ գյուղատնտեսությանը հատկացված գլխում ասված է, որ ծխախոտի միջին բերքատվությունը ռեսպուբլիկայում 1949 թվին կազմեց 9 ցենտներ (էջ 87), մինչդեռ ընկեր Ա. Ի. Միկոյանը Երևանի Ստալինյան ռայոնի ընտրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ 1950 թ. մարտի 10-ին արտասանած իր ճառում բերում է այլ թիվ՝ 7,9 ցենտներ։[1] Նույն տեղում ասված է, որ Նոր-Բայազետի շրջանի Բատիկյանի անվան կոլխոզում ծխախոտի միջին բերքատվությունը 1949 թ. կազմել է 33 ցենտներ, մինչդեռ ընկեր Միկոյանն իր նույն ճառում տալիս է այլ թիվ՝ 33,5 ցենտներ։[2]

Շատ համառոտ է շարադրված ռեսպուբլիկայի տնտեսական կապերին նվիրված 9-րդ գլուխը (ընդամենը 3 էջ)։ Ցանկալի կլիներ ավելի մանրամասն շարադրել այդ կապերը, քարտեզ-սխեմայով ցույց տալ հիմնական ապրանքատեսակների ու հումքի շարժումը։

Երևան քաղաքին նվիրված գլխում ասված է. «Արմատապես փոխվել է Երևանի բնակչության սոցիալական և պրոֆեսիոնալ կազմը» (էջ 118), բայց չի բերված որևէ տվյալ, որի հիման վրա կարելի լիներ դատել, թե ինչպես է փոխվել այդ կազմը, ինչի՞ համեմատությամբ և ի՞նչ չափերով։

Չափազանց քիչ բան է տրված սովետական գիտության զարգացման մասին (ընդամենը մի քանի տող՝ 33-րդ և 125-րդ էջերում)։ Անհրաժեշտ էր այդ մասն ավելի հանգամանորեն շարադրել։

Գրքի 128—129 էջերում, ուր խոսվում է Երևանում կանգնեցված արձանների մասին, պետք էր հիշել նաև Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի արձանը, որը գտնվում է Կիրովի անվան այգում։

Գրքում բացակայում է մեր ռեսպուբլիկայի տնտեսա-աշխարհագրական խոշոր ռայոնների (Արարատյան դաշտ, Սևանի ավազան, Զանգեզուր և այլն) թեկուզ համառոտ տեսությունը։

Ցանկալի կլիներ ավելացնել դիագրամների թիվը (գրքում տրված է ընդամենը 3 դիագրամ՝ էջ 19, 30 և 47)։ Նոր դիագրամներ կարելի էր տալ, օրինակ, գյուղատնտեսության նվիրված բաժնում, Երևան քաղաքին հատկացված գլխում և այլն։

Գրքում բերված՝ ընդհանրապես լավ ընտրված լուսանկարների տպագրությունը մեծ մասամբ անհաջող է կատարված։ Գրքի հաջորդ հրատարակության ժամանակ լավ կլինի ընտրել

---

[1] Տես А. И. Микоян—Речь на собрании избирателей Ереванского Сталинского избирательного округа, 10 марта 1950 г. Москва, Госполитиздат, 1950 г., стр. 59.

[2] Նույն տեղում։

ավելի պարզ ու արտահայտիչ լուսանկարներ և ավելի խնամքով կատարել նրանց տպագրումը։

Գրքում կան նաև մի շարք մանր վրիպումներ ու ոճական անհարթություններ (էջ 33, 46, 56, 59, 72, 90, 118, 120)։ Այսպես, գրքի 124-րդ էջում վերջակետից հետո կտ այսպիսի մի նախադասություն. «Մոտ 80 միջնակարգ, ոչ լրիվ միջնակարգ և տարրական դպրոցներ, որոնք, աշակերտների հարմարության համար, հավասարաչափ տեղաբաշխված են քաղաքի բոլոր թաղամասերում», 69-րդ էջում կարդում ենք. «Համամլու կայարանի մոտ (Թբիլիսի—Լենինական էլեկտրաուղու Ստիտակի շրջան) կառուցված է և 1947 թվից սկսած արտադրանք է տալիս Հայաստանի առաջին շաքարի գործարանը» և այլն։

Հիշված թերությունները վերացնելու, անհրաժեշտ փոփոխություններն ու լրացումները կատարելու դեպքում այս գիրքը կդառնա մի արժեքավոր ձեռնարկ՝ Հայկական ՍՍՌ տնտեսական աշխարհագրության մասին, որը կարելի կլինի հանձնարարել ո՛չ միայն աշակերտներին և ուսուցիչներին, այլև մեր ուսանողությանն ու սովետական ընթերցողների լայն շրջաններին։ Այդ դեպքում ցանկալի կլիներ գիրքը հրատարակել նաև ռուսերեն։

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ